

ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՂՈՒՄՅԱՆ

ԽԱՉՔԱՐԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ

Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ . . . սակայն բաղում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի . . .

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Հայոց հնամենի հողի վրա ապրող ժողովուրդն իր գոյության երկարամյա ճանապարհի կեռմաններում երկնել է կոթողական տարաձև հուշարձաններ՝ մենհիրներ, սեպագրերով, արամեատառ, ավելի ուշ՝ քառակող, բազմակող կոթողներ: Դրանք գերեզմանական, պաշտամունքային և պատմական զանազան իրադարձությունների առթիվ կանգնեցված հուշարձաններ են:

Ազգային ու համաշխարհային մշակույթի գանձարանում առանձնակի տեղ է գրավում կոթողական հուշարձանների այն տիպը, որը հայտնի է **խաչքար** անվամբ:

Խաչը (խաչանշանը) հանդես է եկել մարդկային հասարակության հինավուրց արվեստի ու գրավոր խոսքի առաջնեկների՝ Հայոց լեռնաշխարհում տարածված, 6—8 հազարամյա մշուշաքող հեռուներից մարդկանց հավատալիքների, զբաղմունքի, սովորույթների, պատկերացումների մասին բարբառող ժայռապատկերների հետ միասին:

Ամենուրեք խաչի կարելի է հանդիպել նաև հնագիտական իրերի վրա:

Խաչը ի սկզբանե խորհրդանշել է աշխարհի չորս ծագերի, կյանքի գոյության չորս տարրերի, ծննդի ու մահվան հավերժ գոյության գաղափարը: Խաչը միաժամանակ մարդու ուրվանկարի վերարտադրման պարզագույն ձևն է:

Սակայն, պատմական իրադրության բերումով, երկու հազար տարի առաջ խաչը դարձավ նոր դավանանքի՝ քրիստոնեության խորհրդանիշը և լայն տարածում ստացավ: Սակայն ամենևին ոչ այն ժամանակից, երբ Օգոստոս կայսրի խորթ որդի Տիբերիոսի (14—37 թթ.) վճռով Հրեաստանի կուսակալ (պրոկուրատոր) Պոնտիոս Պի-

դատոսի հրամանով խաչվեց Հիսուս Քրիստոսը: Սա Հռոմեական լայնատարած Կայսրության ու հրեական ժողովրդի միջև ծնվող պայքարի սրման՝ սոցիալական, բաղաքական, գաղափարական հիմնավոր

Նկ. 1. Զվարթնոցի խաչքարը

հակամարտության շրջաններից մեկն էր, Հռոմի գերիշխանությամբ հրեաների ճնշման, կողոպուտի, մասսայական բնաջնջման ու վերջիններիս՝ ինքնության պահպանման բնական ճիգերի գործադրման շրջանը: Այսուհանդերձ, նոր գաղափարախոսությունն ու սոցիալական արմատական պայքարը հաղթանակով պիտի պսակվեր երեք դար հետո: Եվ այդ նոր, չափազանց առաջադիմական գաղափարն աշխարհում առաջինը 301 թվականին պետականորեն հաղթանակեց Հայաստանում, որի համար, ըստ էության, կային ներքին դրդապատճառներ՝ գաղափարական ու սոցիալ-տընտեսական բոլոր պայմանները:

4-րդ դ. նախաշեմից սկսած, Գր. Լուսավորիչը առաջին թեավոր փայտե խաչերը՝ տերունական խաչի սուրբ նշանները, կանգնեցրեց Դիոկղետիանոս կայսեր կողմից հալածված և Հայաստանում նահատակված կույսերի՝ Գայանեի, Հռիփսիմեի վկայարանների վրա[1], գյուղերում, ավերվող մեհյանների տեղում, փողոցներում, ճանապարհների խաչմերուկներում, հրապարակներում՝ որպես պահապան ու ապավեն:

Այնուհետև թեավոր (մարդակերպ) խաչեր են պատրաստվում ավելի ամուր ատաղձից՝ երկաթից, քարից:

Մինչև 7-րդ դ. հավասարաթև խաչեր են բանդակվել նաև կոթողների ու նրանց պատվանդանների, հին եկեղեցիների որմերի վրա: 7-րդ դ. կեսերից խաչ է բանդակվել յարակոթողի վրա և այն կոչվել է **խաչքար:**

Այս շրջանին բնորոշ մի խաչքար է հայտնաբերվել Զվարթնոցի տաճարի մոտ[2]: Դիտելի են խաչաբանդակի զարդաձևերի աղերսները Պտղավանքի (VI դ.) հյուսիսային պատուհանի կամարի, Թալինի կոթողի պատվանդանի սկանաթների և Դսեղի 6—7-րդ դդ. բառակող կոթողի բանդակներին: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ խաչքարագործությունը, լինելով զուտ հայկական երևույթ, ձևավորման, բանդակազարդման հնարանքներով էլ հիմնականում մնաց հայկական: Նրանց գեղազարդման մեջ ներմուծվել են նախկինում ձևորբերված նվաճումները՝ Դ—Է դարերի կոթողների վրա տարածված բուսական, կենդանական թեմաները, երկրաչափական զարդանախշերը: Տեղական ավանդույթներին գումարվել են նաև նոր տարրեր՝ քրիստոնեական հավատքի գաղափարական ակունքների պաշտպանության ու առանձին դրվագների վերարտադրման միջոցով: Խաչքարերի ոճական առանձնահատկությունները պայմանավորված են նաև ժամանակի պահանջներով, բարգործ-արվեստագետների անհատական նախասիրությամբ, գիտելիքներով, ճաշակով, երևակայության թռիչքի հնարավորություններով:

Այժմ անվարան կարելի է ասել, որ անհնար է հյուսել հայկական բանդակագործության շատ թե քիչ ամբողջական պատմությունը՝ շրջանցելով գեղարվեստի հատուկ դպրոց կազմող խաչքարագործությունը: Իրենց երկունքի շրջանում պարզ, թեմատիկ ժլատությամբ հորինված խաչքարերը ԺԲ դարից սկսած «... տաղանդավոր վարպետների անկաշկանդ երևակայությամբ և նուրբ արվեստի շնորհիվ դարձան

[1] **Ագաթանգեղոս,** Պատմություն հայոց, Երևան, 1977, էջ 122:

[2] Հոդվածաշարի լուսանկարները՝ Վ. Ս. Խաչատրյանի:

գեղարվեստական մեծարժեք գործեր»[3]: Այդ հոյաշեն կոթողները, հորինվածքի սկզբունքային ընդհանրությամբ հանդերձ, ինքնատիպ ու չկրկնվող են իրենց դարին ներհատուկ ձեռագործով ու քանդակազարդման ապշեցուցիչ առանձնահատկություններով:

Իսկ խաչքարերը սփռված են միջնադարյան Հայաստանի ողջ տարածքում՝ Այրարատում, Ծիրակում, Գուգարքում, Ջավախքում, Կոտայքում, Գեղարքունիքում, Արցախում, Սյունիքում, Վասպուրականում... ծմակներում ու լեռներում, գերեզմանոցներում ու բնակավայրերում, ճանապարհների եզրերին ու աղբյուրների մոտ, հոգևոր ու աշխարհիկ շենքերի որմերի մեջ, տիրույթների սահմանագծերում, և դժվար է ասել, թե քանի խաչքար է հորինվել երկար ու ձիգ հազար տարվա ընթացքում: Իսկ քանի՞սն է պահպանվում այժմ. մոտավոր հաշվումներով՝ 50 հազար:

Հին Ջուղայի գերեզմանոցում, ականատես Ալեքսանդր Ռոդեսի վկայությամբ, 1648 թ. եղել է 10 հազար խաչքար ու խոյատապան[4]: Նոնջաստանի գլխով ախտաժետ հողմեր են անցել, և մեր օրերին է հասել 2600 խաչքար. կամ՝ չորսից մեկը: Օրինակը եզակի չէ և այն ընդհանրացնելու դեպքում մեզ հասած 50 հազարը պետք է դիտել ողջ խաչքարերի մեկ քառորդը գեթ: Այս պայմանագայում ինքնին հետևում է, որ հազար տարվա ընթացքում Հայաստանում հորինվել է 200 հազար խաչքար, տարեկան՝ 200: Բնավ մեծ թիվ չէ: Բայց, ցավոք, ժամանակի բիրտ ու անողոքելի հրոսումի, չարամիտ դիտավորության, տգիտության, բնական ուժերի անհաղթահարելի ներգործության հետևանքով, արվեստի այլևայլ սքանչելիքների հետ, անդարձ ոչնչացել են հակընթաշար զարդանախշերով հմայիլ դարձած 150 հազար խաչքարեր՝ չարժանացած անգամ ճամփորդ-անցորդի հարևանցի ուշադրությանը:

Մեր օրերում էլ քիչ չեն տեղահանված, հողի մեջ կիսաթաղ, կոտրտված խաչքարերը[5]:

Հենց այդպիսի մի շարք խաչքարեր, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հոգատարությամբ, տեղափոխվել են Էջմիածին՝ ապահովելով նրանց գոյությունն ու մասսայական ցուցադրությունը: Մեր նպատակն է համառոտ տեղեկություններ հաղորդել այդ խաչքարերի բնօրրանի, նրանց ժամանակի ու կանգնեցման շարժառիթների մասին:

Իսկ խաչքարերը՝ խոսում են:

*
* *

Վաղուց, շա՜տ վաղուց ավանդական Գեղամա լճի ավազանում ապրել ու ստեղծագործել է մարդը: Նրա հետքն այնտեղ հասնում է քարե դար, երբ քարը գործիք ու զենք էր, մագաղաթ ու կտավ, և մարդկանց շնորհներն ու տարեգրության հնագույն էջերը քարե գործիքով դրոշմվում էին քարերի վրա:

Շատ հողմեր են անցել Գեղամա ծովակի քարազգեստ եզրերով—միջցեղային կռիվներ, ուրարտական մարտակառքեր, արաբական, պարսկական կայծաամբակ հեծյալներ, սելջուկյան ու թաթարական նետաձիգներ, արյունռուշտ ջալալի խաժամուժներ... Երբ գուժել են, թե նախճիրներով ու ասպատակությամբ ներխուժում է թշնամին, կռիվ ու արյուն չսիրող հայ սերմնացանը կոշտացած ձեռքով հողին է հանձնել արեվից խունացած գոգնոցի վերջին բուռ ցորենը՝ հավատացած լինելով, որ այն կծլի, կփթթի տունկը հայրենի, կպտղակի օջախը հայոց, ու կհանդարտվի խորշակն ամեհի... Պտուտահողմի նման եկել ու անցել են ժպիրն ոսոխները, մնացել է տանտերը, ամոքել վերքերը, ծխել ծխանը: Եվ անդադրում կերտել-ստեղծել է նա համոզմունքով, հույսով, հավատով:

Հույսով ու հավատով ստեղծվածը հավերժությանն է:

Ու հավերժությանն են այս ափաչափ հողակտորի վրա գոյատևող մեր ստեղծագործ ժողովրդի դարավոր կերտվածքները՝ թշնամիների դեմ սատար կանգնող անառ բերդերը, շրթները նոր բացող բազմախորհուրդ ժայռապատկերները, հեռո՜ւ-հեռավոր մեր նախնիների անյունները խնամքով պահող խոսուն դամբարանները, մամռապատ ու գոսացած վանքերը՝ կուլտուրամշակութային երբեմնի կենտրոնները, մեռած ու կենսալի գյուղերի շրջագծերում պահապանների նման դիք կանգնած, երկնի մշուշի մեջ մխրճված սրասույր լեռնակատարներից աշխարհը հսկող և մոլորվածներին տուն կանչող խաչքարերը:

1965—1975 թթ. լճափնյա տարածքից՝ Գեղարքունիքից, Սոդքից, Վարաժնունիքից և Արցախից Մայր Աթոռ են փոխադրվել

---

[3] **Մեդրակ Բարխուդարյան**, Միջնադարյան հայ նարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 136:

[4] **Հ. Ղևոնդ Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 424:

[5] Հայաստանի հուշարձանների պահպանության վարչության կողմից միայն վերջին 5 տարում իրենց նախնական տեղերում վերադրած խաչքարերի թիվը անցնում է 6 հարյուրից:

տեղահանված, պատվանդաններից վար ձգված, հողմերի, տեղումների հարվածներից ծեծկոտվող մի շարք խաչքարեր։ Դրանք ամրահյուս ատաղձի շնորհիվ չեն քայքայվել-այլակերպվել։ Այս նորաքնակ խաչքարերից երկուսը 1000—1100-ամյա զառամյալներ են, երկուսը՝ 700-ամյա ծերուկներ են, իսկ մնացածները չորս հարյուրամյա նորելուկներ են։

Նկ. 2. Հայրավանքի խաչքարը

Զառամյալ խաչքարերից մեկը Մայր Աթոռ է բերվել 1969 թ. Հայրավանքի մոտից՝ հանելով բանջարանոցի ցանկապատից։ Այժմ տեղադրված է Վեհարանի բակում, պարտեզի մեջ։

Խաչքարը բնորոշ է իր դարի կոթողներին՝ պարզ ու հասարակ է, վերևի մասը՝ կլոր, մշակված է լոկ մի ճակատը, ուր և փորագրված է անպաճույճ, հստակ խաչաքանդակը՝ թեև արդեն խախտված է 4—7-րդ դդ. յուրահատուկ խաչի համաչափությունը։ Խաչքարերի ձևավորման այս կարգը էապես պահպանվում է ընդհուպ մինչև 11-րդ դ.։ Այդպիսին են, ազդասյուների նրման հողին կառանված, Սիսիանի շրջանի Թանահատի վանքի 871 թ., Մեծ Մազրայի 881 թ., Գնդեվանքի 967 թ., Ձորագյուղի 989 և 996 թթ., Վարդենիսի շրջանի Թուսկուլիի 989 թ., Մուղնու 986 թ., Նորատուսի 996 թ., Հաղբատի 1023 թվակիր խաչքարեր, որոնք միաժամանակ չափօրինակ են անհիշատակագիր հին խաչքարերի ժամանակն անվրեպ որոշելու համար։ Հայրավանքի այս կոթողն իր կատարողական արվեստով և թեմատիկայով ավելի պարզ է, քան վերոնշված թվակիր խաչքարերը, ուստի կարելի է համարել նրանց նախօրինակը և թվագրել 8-րդ դ.-ով կամ 9-րդ դ. սկզբով։

Խաչարձանագործության առաջին շրջանում հորինված այս կոպտակոփ կոթողի վարպետը նպատակ է ունեցել պարզ ու որոշակի ցուցադրել քրիստոնեության խորհրդանշանը՝ խաչը։ Սակայն այն հանդես չի եկել միայնակ և հորիզոնական թևերի տակ արված մեկական փոքր, տարաձև խաչանշաններով, ըստ էության, լուծվել է քրիստոնեական դավանանքի հիմքը՝ սուրբ Երրորդության գաղափարը։ Ի դեպ, այս սկզբունքը, բազմազան ոճավորմամբ, այնուհետև դարձավ խաչարձանագործության ընդհանրական մոտիվներից մեկը և հարատևեց ընդհուպ մինչև 18-րդ դար։

Հին դարերի իրադարձություններին, «ականջալուր-ականատես» երկրորդ խաչքարը ձերբազատվել է Մաքենյաց վանքին մերձակա մի ցանկապատից, որը, հավանաբար, ի սկզբանե ագուցված է եղել վանքի պարսպի մեջ։ Այժմ այն կանգնած է Էջմիածնի Մայր տաճարի հյուսիսային պարսպի արևելյան որմնախորշում։

Առնվազն 8-րդ դ. սկզբից սկսած Մաքենյաց վանքը մեծ հռչակ ուներ Հայաստանում։ 9-րդ դ. Աշոտ թագավորի քույր Մարիամի և Վասակ Գաբուռնի որդի Գրիգոր Սուփանը հիմնովին վերակառուցում է 828 թ. Բաբանի կողմից ավերված Մաքենյաց առաքինարանը։ Նրա հովանավորությամբ գործող դպրոցը անառարկելի հեղինակություն էր վայելում երկրում իբրև մշակութային-կրթական, գաղափարական, թարգմանչական նշանավոր ու առաջնակարգ կենտրոն։ Ահա այս բարենպաստ միջավայրում էլ (Սոդքում) փոխվեցին խաչքարագործության նախնական ըմբռնումները և երևան եկան առաջին վճռորոշ քայլերը գեղարվեստորեն ձևավորված կոթողներին անցման ճանապարհին։ Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում «Մաքենյաց» խաչքարը, որի վրա հանդես են եկել կրոնական ու աշխարհիկ պատկերացումների մի շարք դրվագներ։

Հորինվածքի կենտրոնում գերիշխում է գաղափարական առանցքակետը՝ հստակ, անխառն խաչաքանդակը: Այս դեպքում ևս մշակված է քարակոթողի մեկ ճակատը, որը եզրագծող նեղ գոտին, երկնակամարի պես, իր մեջ է ներառում խաչն ու հարակից քանդակները: Ավելի ուշ, 12-րդ դ. սկսած, երբ քարակոթողն ամբողջովին քանդակազարդվում է, խաչանշանն առանձնացվում է կոթողի կենտրոնական մասի խորանում, իսկ այժմ դեռ դրա անհրաժեշտությունը չկա: Սակայն արդեն մշակված է որոշակի, թեև նախնական սկզբունքները՝ խաչաքանդակը հանդես է գալիս մի դեպքում ստո-

Նկ. 3. Մաքենյաց խաչքարը

րին մասի շրջագծի՝ երկրագնդի[6] խորհրդանիշի, մի ուրիշ դեպքում Գողգոթայի միասնությամբ: Այս մանրամասները այնուհետև դարձան խաչքարերի քանդակագործության հաստատուն մոտիվները:

Մաքենյաց խաչքարի հորինվածքը սկըսվում է եռաստիճան Գողգոթայի պատկերով: Ինչպես հայտնի է, Գողգոթան, ուր խաչվեց Հիսուսը, գտնվում էր Երուսաղեմի պարիսպներից դուրս: Այս պատճառով էլ հանրահայտ լեռան խորհրդանիշը լայնորեն արտացոլվել է քրիստոնեական արվեստի տարբեր բնագավառներում և, հատկապես, խաչարձանագործության մեջ: Լեռնապատկերի վրա, հավանաբար չորսի գաղափարն արտահայտող քառաթերթիկ շրջանակն է, որից աջ ու ահյակ ծլարձակվում են կենաց ծառի (արմավենի) փարթամ ճյուղերը: Արմավենին կյանքի՝ ծննդի և վերակենդանացման առհավտչյան է: Քանի որ գոյության գրավականը ծնունդն է, իսկ դրան, բնականաբար, հետևում է մահը, ուստի, հեթանոսական ու քրիստոնեական գաղափարախոսության համաձայն, գոյություն է կոչվել նաև վերածննդի՝ հարության գաղափարը: Սրա արտահայտությունն է Օսիրիսի և Ադոնիսի մահվան ու վերակենդանացման հանրահայտ առասպելները, որոնք ստեղծվել են սոցիալական որոշակի հենքի վրա: Տվյալ պարագայում կյանքի մշտագոյության սիմվոլի՝ արմավենու միջից հառնում է քրիստոնեության խաչանշանը՝ խաչը՝ շեշտելով նոր դավանանքի հաստատուն տիրապետությունն ու մշտնջենականությունը:

Խաչաթևերի հատույթում, փայտե հինավուրց խաչերի օրինակով, շեղանկյան ձևով, պատկերված է թևերը՝ ներսում կըրկնակի շրջանակներով, իսկ «ետևի» կողմում, երկրաչափական ճշգրիտ պատկերմամբ՝ շրջանաձև խոշոր թևերը, որը երևում է խաչաթևերի արանքից: Հորիզոնական թևերից վեր քանդակված են. ձախ կողմում ասես 7 մոլորակները պատկերող 7 կետակենտրոնով[7] աստղաձև, աջում սայլանիվաձև շրջանակները՝ XIII դ. կատարյալ ձևերով հանդես եկող արեգակի և լուսնի խորհրդանշանների նախնական օրինակները:

Մի հանգամանք ևս. խաչքարի քանդակները արված են եռամիության սկզբունքով: Այսպես, եռաստիճան է Գողգոթայի պատկերը, եռանյուղ-եռապտուղ է արմավենին, խաչի հորիզոնական թևերից վերև կա երեք շրջանակ և, վերջապես, խաչանշանն ինքը երեքական պարանաձողերի համակցում է, որով, ոճավորված կերպով, լուծվում է սուրբ Երրորդության գաղափարը: Բնական է, որ քրիստոնեական դարաշրջանի թե՛ կրոնական, թե՛ ժողովրդական արվեստի բնագավառում (մեծ մասամբ ոճավորված ձևով) իր արտահայտությունը պետք է գտներ Երրորդության գաղափարը:

Մաքենյաց խաչքարն ակնհայտ վկայությունն է այն բանի, որ արդեն 9—10-րդ դդ. խաչքարակերտ վարպետները գտնում են գեղարվեստական արտահայտչականության նոր ձևեր՝ ավելի բազմաբովանդակ ու ակնհայտ դարձնելով իրենց ստեղծագործությունները: Ու թեև տարբեր թեմաներով արված քանդակները դեռևս պարզ ու հասարակ են, սակայն մշակույթի այս ճյուղը ակնհայտաբար թոթափում է խանձարուրի կապանքները: Այս ամենը՝ արվեստի զարգացման որակական առաջընթացի նախատավորումը, հարկավ, աղերսվում էր նաև երկրի կյանքի զարգացման ռիթմի կանոնավորման, հետզհետե ամրապնդվող քաղաքական անդորրության, կորսված պետական ինքնավարության վերահաստատման հետ:

---

[6] Այս տարրը հանդես է եկել Զվարթնոցի խաչքարի վրա՝ 12 թևանի շրջագծի ձևով: Ի դեպ, Զվարթնոցի խաչքարը հայտնաբերվել է 1972 թ., տաճարից 50 մ արևմուտք, գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում: Հուշարձանի ջերմեռանդ դիրեկտոր, հանգուցյալ Վարդգես Բարոյանի կողմից այն տեղափոխվել է թանգարանի ժամանակավոր շենք, ուր և ցուցադրվում է այժմ: Ցավոք, խաչքարն ամբողջական չի և դժվար է նրա մասին վերջնական խոսք ասել:

[7] Նվիրական, խորհրդավոր թիվ է համարվել 7-ը դեռևս անհիշելի ժամանակներից: Այն անցել է նաև քրիստոնեության մեջ: Այսպես, Հովհաննես առաքյալին հայտնված Քրիստոսը «ունէր յաջոյ ձեռինն իւրում աստեղս եւթն» (Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց, Կոստանդնուպոլիս, 1895, «Յայտնութիւն Յովհաննու», էջ 260): Եվ Հովհաննեսն իր տեսածն ու լսածը պետք է գրեր և ուղարկեր Ասիայի 7 եկեղեցիներին, իսկ 7 աստղերը 7 եկեղեցիների հրեշտակներն են, 7 ճրագակալները՝ 7 եկեղեցիները: Հայոց մեջ տարածված են նաև 7 խորհուրդները, սուրբ Սահակի 7 կանոնները, 7 հրաշալիքները և այլն: Իսկ լույսը, քրիստոնեական գաղափարախոսության առաջին հայ մեկնիչ, պատմիչ Ագաթանգեղոսի վկայությամբ, Աստծո խորհրդանիշն է, որը պետք է բացի մարդկանց խավար աչքերը՝ տեսնելու Աստծո Որդուն, արդարը, ազնիվը, շիտակը, պայքարելու դժխեմ սատանայի, չարի, հեթանոսի դեմ: Լույսը նոր հավատի ճրագն է (**Ագաթանգեղոս,** Պատմություն հայոց, Երևան, 1977, էջ 69): Մի խոսքով, լույսը ինքը քրիստոնեությունն է, որի տարածմամբ դիտվում էր մարդկության փրկության, արդարության, հաղթանակի գրավականը:

Հայրավան գյուղը տեղավորված է «Ազատ քաղաք» բնակավայրի տարածքում, ուր կյանքը, 1830 թ. վերաբնակեցումից առաջ, գոյատևել է ընդհուպ մինչև XVIII դ.: Այստեղ հորինված խաչքարերից երկուսը ևս, որ ընկած են եղել գյուղամիջյան մատուռի շրջապատի գերեզմանոցում, տեղափոխվել են Էջմիածին 1960-ական թվականների վերջերին:



Նկ. 4. Խաչքար՝ Հայրավանից

Ամբողջովին մշակված է առաջին խաչքարի արևմտյան ճակատը՝ թեև ոչ նրբորեն: Ուղղանկյուն խորանում խաչանշանն է, իսկ նրանից ցած և ստորին շրթին հիշատակված է՝ ԶՄԽ(ԻԹԱՐ) [ԵՐԷՑ Ց]ԻՇԷՔ, ՈՐ Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈ[Ր]Մ[Ե]Ա[8]:

Խաչքարը պետք է վերագրել XIV դարին ու այն համարել, այսպես կոչված, անցման շրջանի կոթողներից, երբ երկրի տնտեսական ու քաղաքական կյանքին զուգընթաց աստիճանաբար անկում է ապրում նաև արվեստը, նախկին պարզ ար-

Նկ. 5. Խաչքար՝ Հայրավանից

[8] Արձանագրության վերջին տողը կիսաեղծ է և դժվարությամբ է ամբողջանում: Ս. Բարխուդարյանը այն վերծանել է ԶՄԽ/ԻԹԱՐ [Ց]ԻՇԵՑԷՔ ՏՐ ՈՂՈՐՄ[Ի] ձևով, որը չի հաստատվում գոյություն ունեցող տառաշարքով («Դիվան», պրակ IV, էջ 83, արձ. 319):

վեստագիտական բարձր վարպետությամբ հորինված եզակի ու ինքնատիպ ստեղծագործությունների փոխարեն երևան են գալիս ավելի պարզունակ, թեմատիկ առումով միմյանց կրկնող խաչքարեր:

XVI—XVII դդ. խաչարձանագործությունը Հայաստանում կրկին վերելք է ապրում, իսկ առաջնության դափնին պատկանում է Զուղային, Սոդրին ու Գեղարքունիքին: Այս դարաշրջանին բնորոշ է քանդակների մանրացումը, խտացումը, քարակոթողի արևմտյան ճակատի հոծ մշակումը, բազմաժանրությունը՝ զիջելով իր նախորդ շրջանի նվաճմանը՝ կատարողական արվեստով ու հմտությամբ: Այս բնույթի խաչքարերից մեկն ընկած է եղել առաջինի հարևանությամբ[9], որի թիվին պահպանվում է [ԽԱՉՍ] ԲԱՐԷԽԱԻՍ ՄԿՐՏԻ[ՉԻՆ] հողմահարված արձանագրությունը, իսկ խորանում՝ ԹՎ[ԻՆ] Զ/ԿԵ (1516)[10]:

[9] Այս երկու խաչքարերն այժմ գտնվում են Հին Վեհարանի բակում, հենված պատին:

[10] Ս. Բարխուդարյանը նկատել է միայն թիվը («Դիվան», պրակ IV, էջ 83, արձ. 318):